ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 225

29 օգոստոս 2018թ.

ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և հիմք ընդունելով Արման Հարությունյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արման Հարությունյանին սույն թվականի օգոստոսի 31-ից ազատել <<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից:

2. Լուծել Արման Հարությունյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

3. <<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես վերապահել կազմակերպության գլխավոր հաշվապահ Մելանյա Սաղոյանին:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 226

30 օգոստոս 2018թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169[1]-րդ հոդվածի 2-րդ մասով (գույքահարկի և հողի հարկի հաշվարկը սահմանված ժամկետում տեղական ինքնակառավարման մարմին չներկայացնելը), 219[1]-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. "Արզնի Գրուպ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /ՀՎՀՀ 01540408, հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 69/ նկատմամբ նշանակել վարչական տուգանք 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքի բյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրը:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 227

30 օգոստոս 2018թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169[1]-րդ հոդվածի 2-րդ մասով (գույքահարկի և հողի հարկի հաշվարկը սահմանված ժամկետում տեղական ինքնակառավարման մարմին չներկայացնելը), 219[1]-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. "Գալիտա" Փակ բաժնետիրական ընկերության /ՀՎՀՀ 00055738, հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի փողոց, 36-197/ նկատմամբ նշանակել վարչական տուգանք 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքի բյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրը:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 228

30 օգոստոս 2018թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169[1]-րդ հոդվածի 2-րդ մասով (գույքահարկի և հողի հարկի հաշվարկը սահմանված ժամկետում տեղական ինքնակառավարման մարմին չներկայացնելը), 219[1]-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. "Տրանսպարենս Սոլյուշնս" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /ՀՎՀՀ 02656667, հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի փողոց, թիվ 3/ նկատմամբ նշանակել վարչական տուգանք 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքի բյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրը:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 229

31 օգոստոս 2018թ.

ԶԵՓՅՈՒՌ ԱՐԱՄԻ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Զեփյուռ Արամի Զաքարյանին կառուցապատման իրավունքով պատկանող (վկայական N2508591 տրված՝ 2008 թվականի նոյեմբերի 24-ին) 0.002 հա ընդհանուր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր, Խաչիկ Մուրադյան փողոց, թիվ 5/32:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 230

31 օգոստոս 2018թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով / սեփականության իրավունք ունեցող անձի կողմից հողամասի վրա շինության ինքնակամ կառուցում/ և 219 [1] հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անժելա Գագիկի Խաչատրյանի /ք. Երևան, Տերյան փողոց, թիվ 19/39/ նկատմամբ նշանակել տուգանք՝ 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2.Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքի բյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 231

31 օգոստոս 2018թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի ԹԻՎ 43 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 10-ի թիվ 60-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 06-ի <<Ծաղկաձոր համայնքի 2018 թվականի ծախսերի և եկամուտների եռամսյակային համամասնությունները հաստատելու մասին>> թիվ 43 որոշման թիվ 1 և 2 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի և 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 232

03 սեպտեմբեր 2018թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի 596-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Անժելա Գագիկի Խաչատրյանի լիազոր ներկայացուցիչ Արթուր Բալյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Ծաղկաձոր համայնքի Խաչիկ Մուրադյան փողոց թիվ 20 հասցեում գտնվող, Անժելա Գագիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված 834,2 ք.մ. արտաքին մակերեսով հյուրանոցը, 11,4 ք.մ. մակերեսով պարիսպը և 219,6 ք.մ. արտաքին մակերեսով կիսակառույց նկուղը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Շինությունների օրինականացման համար սահմանել վճար՝ 5 539 040 (հինգ միլիոն հինգ հարյուր եռեսունինը հազար քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125002478 հաշվեհամարին:
4. Կիսակառույց նկուղի շինարարական աշխատանքները շարունակելու համար Անժելա Գագիկի Խաչատրյանին տրամադրել նախագծման թույլտվություն:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 233

04 սեպտեմբեր 2018թ.

ՀԵՆՐԻ ՄԱՅՔԼ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԵՎ ԷԼՖՐԻԴԱ ՄԵՐՐԻ ԳԵՎՈՐԿՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հենրի Մայքլ Գևորգյանին և Էլֆրիդա Մերիի Գևորգյանին ժառանգությամբ անցած (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ տրված 2018 թվականի օգոստոսի 31-ին, ԵՐԵՎԱՆ նոտարական տարածքի նոտար Ատոմ Գրիգորիի Հայրապետյանի կողմից) 0.05հա ընդհանուր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր, Պնահլավունյաց փողոց,4-րդ փակուղի թիվ 3:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 234

04 սեպտեմբեր 2018թ.

ՎԱՐՍԵՆԻԿ ՍԻՐԵԿԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Վարսենիկ Սիրեկանի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի վկայական N2310082 տրված՝ 2007 թվականի հուլիսի 16-ին) ժառանգությամբ Կորյուն Մեսրոպի Վիրաբյանին անցած 0.06 հա ընդհանուր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր, Նոր թաղամաս 4-րդ փողոց, թիվ 36:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 245

04 սեպտեմբեր 2018թ.

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Արսեն Արզումանյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, <<Հողի հարկի մասին>> օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2018 թվականի օգոստոսի 21-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2.Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից տրված տվյալների քաղաք Ծաղկաձոր, Մհեր Մկրտչյան փողոց թիվ 32 հասցեի 2,67հա մակերեսով /ծածկագիր 07-0005-0021-0007 և Մհեր Մկրտչյան 32/1 հասցեի 1,31 հա, մակերեսով /ծածկագիր 07-005-0021-0015/ հողամասերը հանդիսանում են Արսեն Արզումանյանի սեփականությունը, որոնք <<Հողի հարկի մասին>> օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտ: Հողամասերի համար վճարման ենթակա հարկը կազմում են համապատասխանաբար՝ 764 371 դրամ և 375 027 դրամ: Հողի հարկի տարեկան գումարները 2009-2017 թվականների ընթացքում ժամանակին չվճարելու արդյունքում 04.09.2018 թվականի դրությամբ առաջացել է տույժ՝ համապատասխանաբար՝ 338 944 Հայաստանի Հանրապետության դրամի և 166 302 Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

Ծաղկաձորի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի սեպտեմբերի 04-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով ծանուցվել է Արսեն Արզումանյանը /հիմք փոստ.անդորրագիր/ սակայն չի ներկայացել :

3.Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Հողի հարկի մասին>> օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> օրենքի 16-րդ հոդվածի՝հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն Հարկային օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ <<2) հաշվառող մարմիններ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնք՝

ա. իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,

բ. իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:>>

Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող <<Հարկերի մասին>> օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Հողի հարկի մասին>> օրենքի 1-ին, 16-րդ, <<Հարկերի մասին>> օրենքի 29.1-ին, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արսեն Արզումանյանից հօգուտ Ծաղկաձոր համայնքի բյուջե գանձել 1 644 644 /մեկ միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար վեց հարյուր քառասունչորս/ Հայաստանի Հանրապետության դրամ, որից՝

- քաղաք Ծաղկաձոր Մհեր Մկրտչյան փողոց 32 հասցեում գտնվող հողամասի հողի հարկ՝ 764 371 Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես ապառք և 338 944 Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում 04.09.2018 թվականի դրությամբ հաշվարկված տույժ,

-քաղաք Ծաղկաձոր Մհեր Մկրտչյան փողոց 32/1 հասցեում գտնվող հողամասի հողի հարկ՝ 375 027 Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես ապառք և 166 302 Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում 04.09.2018 թվականի դրությամբ հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ծաղկաձոր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության Վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, այն կներկայացվի ՀՀ Վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով :

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ծաղկաձոր համայնքի ղեկավարը:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 246

04 սեպտեմբեր 2018թ.

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծաղկաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Սոֆիա Վրույրի Առաքելյանը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, <<Գույքահարկի մասին>> օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ **2018 թվականի օգոստոսի 21-ին** <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Քննարկվող անշարժ գույքը՝ հանդիսանում է Սոֆիա Վրույրի Առաքելյանի սեփականությունը, ինչը <Գույքահարկի մասին> օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար վճարման ենթակա գումարը կազմում է 1 518 196 դրամ: Գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով : Սոֆիա Առաքելյանի կողմից 2011-2017 թվականն ընկած ժամանակահատվածի համար գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում 04.09.2018 թվականի դրությամբ առաջացել է տույժ՝ 695 688 Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2018 թվականի օգոստոսի 21-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի սեպտեմբերի 04-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Ս.Առաքելյանը /հիմք՝ փոստային անդորրագիր/: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Գույքահարկի մասին>> օրենքի 2-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի

<<3) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը.

4) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ.>>:

Համաձայն Հարկային օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ <<2) հաշվառող մարմիններ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնք՝

ա. իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,

բ. իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:>>

Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող <<Հարկերի մասին>> օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքով, <<Գույքահարկի մասին>> օրենքի 2-րդ, 3-րդ, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սոֆիա Վրույրի Առաքելյանից հոգուտ Ծաղկաձոր համայնքի բյուջե գանձել 1 518 196 /մեկ միլիոն հինգ հարյուր տասնութ հազար հարյուր իննսունվեց/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ որից.

- 822 536 Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես գույքահարկի ապառք,

- 695 646 /վեց հարյուր իննսունհինգ հազար վեց հարյուր քառասունվեց/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես գույքահարկի պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ծաղկաձոր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության Վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, այն կներկայացվի ՀՀ Վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով :

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ծաղկաձոր համայնքի ղեկավարը:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 247

04 սեպտեմբեր 2018թ.

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծաղկաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Սիլվա Հարությունի Համբարձումյանը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, <<Գույքահարկի մասին>> օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ **2018 թվականի օգոստոսի 21-ին** <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Քննարկվող անշարժ գույքը՝ հանդիսանում է Սիլվա Համբարձումյանի սեփականությունը, ինչը <Գույքահարկի մասին> օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար վճարման ենթակա գումարը կազմում է 309 904 դրամ: Գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով : Սիլվա Համբարձումյանի կողմից 2013, 2015-2017 թվականն ընկած ժամանակահատվածի համար գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում 04.09.2018 թվականի դրությամբ առաջացել է տույժ՝ 75836 Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2018 թվականի օգոստոսի 21-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի սեպտեմբերի 04-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Սիլվա Համբարձումյանը /հիմք՝ փոստային անդորրագիր/: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Գույքահարկի մասին>> օրենքի 2-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի

<<3) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը.

4) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ.>>:

Համաձայն Հարկային օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ <<2) հաշվառող մարմիններ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնք՝

ա. իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,

բ. իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:>>

Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող <<Հարկերի մասին>> օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքով, <<Գույքահարկի մասին>> օրենքի 2-րդ, 3-րդ, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սիլվա Հարությունի Համբարձումյանից հօգուտ Ծաղկաձոր համայնքի բյուջե գանձել 303 904 /երեք հարյուր երեք հազար ինը հարյուրչորս/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ որից.

- 228 068 / երկու հարյուր քսանութ հազար վաթսունութ/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես գույքահարկի ապառք,

- 75 836 /յոթանասունհինգ հազար ութ հարյուր երեսունվեց/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես գույքահարկի պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ծաղկաձոր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության Վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, այն կներկայացվի ՀՀ Վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով :

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ծաղկաձոր համայնքի ղեկավարը:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 248

04 սեպտեմբեր 2018թ.

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Սիլվա Հարությունի Համբարձումյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, <<Հողի հարկի մասին>> օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2018 թվականի օգոստոսի 21-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2.Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից տրված տվյալների քաղաք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց թիվ 5 հասցեի 0,34հա մակերեսով /ծածկագիր 07-0005-0007-0001 և քաղաք Ծաղկաձոր Վեցիկ Ճարտարապետի փողոց թիվ 12 հասցեի 0,168 հա, մակերեսով /ծածկագիր 07-005-0007-004/ հողամասերը հանդիսանում են Սիլվա Համբարձումյանի սեփականությունը, որոնք <<Հողի հարկի մասին>> օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտ: Հողամասերի համար վճարման ենթակա հարկը կազմում են համապատասխանաբար՝ 55 644 դրամ և 27 497 դրամ: Հողի հարկի տարեկան գումարները 2013, 2015-2017 թվականների ընթացքում ժամանակին չվճարելու արդյունքում 04.09.2018 թվականի դրությամբ առաջացել է տույժ՝ համապատասխանաբար՝ 13 172 Հայաստանի Հանրապետության դրամի և 6 509Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

Ծաղկաձորի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի սեպտեմբերի 04-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով ծանուցվել է Սիլվա Համբարձումյանը /հիմք փոստ.անդորրագիր/ սակայն չի ներկայացել :

3.Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Հողի հարկի մասին>> օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> օրենքի 16-րդ հոդվածի՝հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն Հարկային օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ <<2) հաշվառող մարմիններ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնք՝

ա. իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,

բ. իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:>>

Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող <<Հարկերի մասին>> օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Հողի հարկի մասին>> օրենքի 1-ին, 16-րդ, <<Հարկերի մասին>> օրենքի 29.1-ին, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սիլվա Հարությունի Համբարձումյանից հօգուտ Ծաղկաձոր համայնքի բյուջե գանձել 83 141 /ութսուներեք հազար հարյուր քառասունմեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ, որից՝

- քաղաք Ծաղկաձոր Մայիսյան փողոց թիվ 5 հասցեում գտնվող հողամասի հողի հարկ՝ 42 472 Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես ապառք և 13 172 Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում 04.09.2018 թվականի դրությամբ հաշվարկված տույժ,

-քաղաք Ծաղկաձոր Վեցիկ Ճարտարապետի փողոց թիվ 12 հասցեում գտնվող հողամասի հողի հարկ՝20 988 Հայաստանի Հանրապետության դրամ՝որպես ապառք և 6 509 Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում 04.09.2018 թվականի դրությամբ հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ծաղկաձոր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության Վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, այն կներկայացվի ՀՀ Վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով :

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ծաղկաձոր համայնքի ղեկավարը:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 249

06 սեպտեմբեր 2018թ.

ԱՐՄԵՆ ԱՎԱԿ ԱՎԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Արմեն Ավակ Ավակյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի վկայական N1126388 տրված՝ 2004 թվականի սեպտեմբերի 22-ին) 0.06 հա ընդհանուր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր, Նոր թաղամաս, 1-ին փողոց, թիվ 15:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 250

06 սեպտեմբեր 2018թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2018 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 16:00-ին հրավիրել Ծաղկաձոր համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ ելնելով քննարկվող հարցերի անհրաժեշտությունից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 251

07 սեպտեմբեր 2018թ.

ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 38-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Չեղյալ ճանաչել Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 08-ի <<Ջանիբեկ Սուրենի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի բաժանման հետևանքով առաջացած հողամասերին հասցե տրամադրելու մասին և Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2017 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 314 որոշումը չեղյալ ճանաչելու մասին>> թիվ 320 որոշման 1-ին կետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ